

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐԵՄՏՅԱՆ ՁԵՌՎ

Վերջոյն Երեւանում ներկայացվեց Համաշխարհային Տնտեսական Համաժողով (World Economic Forum) կազմակերպության «2005–2006 թ.թ. Համաշխարհային տեղեկատվական տեխնոլոգիաների զեկույցը», որի վարկացանկը գլխավորում են ԱՄՆ-ը, Սինգապուրը եւ Դանիան, եւ որում Հայաստանին հատկացված է 86-րդ տեղը՝ ըստ տեղեկութա-հաղորդակցական ոլորտում գործելու պատրաստության: Չեկույցն արդէն իսկ շնորհանդեսի պահին արժանացավ, մեղմ ասած, «ոչ միանշանակ» գնահատականների: Հայաստանի տեղեկութային ասպարեզի մասնագետները արտահայտեցին իրենց թերհավատությունը զեկույցի առանձին կողմերի վերաբերյալ: Սակայն իմաստ ունի անդրադառնալ այդ «ուսումնասիրության» գիտական բարեխղճությանն առհասարակ:

Չեկույցի ընդհանուր տվյալները՝ նախաբանը, վարկացանկը, կարելի է գտնել www.weforum.org կայքում (զեկույցն ամբողջությամբ վաճառվում է, եւ արժե £65.00): Առհասարակ, գիտական բարեխղճությունը պահանջում է, որ նման հետազոտությունը ուղեկցվի առնվազն մոտավոր նշմամբ, թե ի՞նչ եղանակներով են հայթայթվել, ըտրվել եւ ապա՝ մշակվել տվյալները, ի՞նչ բանաձեւով են միջինացվել արդյունքները. թվաբանական, քառակուսային, եւ այլն: Այստեղ ոչ մի նման բան մենք չենք տեսնում: Կարող են ասել, թե նման զեկույցներում, ընդունված չէ այդպիսի տեղեկություններ հայտնել: Ճիշտ է: Բայց հենց դրա պատճառով է, որ բոլոր նման զեկույցները անլուրջ տպավորություն են թողնում՝ ավելի շատ քարոզչական պատվերի կատարման, քան գիտական ուսումնասիրության:

Այսպես, հարց է առաջանում. ի՞նչ սկզբունքով են ընտրվել այն դաշտերը, ըստ որոնց պիտի որոշվեր այս կամ այն երկրի վարկանիշը: Օրինակ, ինչո՞ւ է դիտարկվել ՀՆԱ (Համախառն Ներքին Արտադրանք) ցուցանիշը, որը շատ վերացական վերաբերմունք ունի տեղեկութային եւ հաղորդակցական ոլորտին, բայց չի դիտարկվել նույն կարգի մեկ այլ ցուցանիշ՝ պետական պարտքի մակարդակը: Արդյոք դրա պատճառն այն չէ՞, որ աշխարհի ամենամեծ պատրասակը Միացյալ Նահանգներն են: ԱՄՆ միայն պետական պարտքերը կազմում են մոտ 8 տրլն դոլար, կամ ավելի քան \$32000 մեկ շնչին (համեմատության համար, Ռուսաստանի դեպքում այդ թվերը կազմում են 80 մլրդ եւ \$530, իսկ Հայաստանի համար մոտ 1,2 մլրդ եւ \$340): Պարզ է, որ եթե այդ ցուցանիշը հաշվի առնվեր ԱՄՆ-ը առաջին տեղի փոխարեն կհայտնվեր ցուցակի, առնվազն, միջին մասում, մինչդեռ «ուսումնասիրության» հեղինակները ամենեւին էլ ԱՄՆ-ին նման վարկանիշով «երջանկացնելու» մտադրություն չունեն:

Կամ, ինչպե՞ս է որոշվել Համացանցից օգտվողների թիվը. վերցվել է Համացանցային հաշիվ ունեցողների թիվը եւ բաժանվել բնակչության թվի վրա՞: Եթե այդպես է, ապա պարզ է, որ եթե ԱՄՆ-ի համար նման մոտեցումը գուցե արդարացված է, երբ յուրաքանչյուր մարդ ունի իր սեփական հաշիվը, ապա Հայաստանում, ուր ընտանիքի գաղափարը դեռ չի վերացել եւ ընտանիքի անդամներից մեկի հաշիվը դա բոլորի հաշիվն է, նման եղանակը կարող է նվազեցնել Համացանցից հայ օգտվողների տոկոսը առնվազն ընտանիքի անդամների միջին թվի չափով, այսինքն մոտ 5 (հինգ) անգամ:

Կամ այնպիսի ցուցանիշ, ինչպիսին գրագիտությունն է: Այդ ի՞նչ եղանակով է ստացվել, որ բնակչության գրագիտությունը Հայաստանում, ուր միշտ էլ կրթությունը պաշտամունքի կարգավիճակ է ունեցել կազմում է 98,5%, այսինքն նույնքան, որքան ԱՄՆ-ում (Վրաստանում՝ 100%, Ռուսաստանում՝ 99,6%). այս ի՞նչ խեղկատակություն է: Պարզվում է, որ ԱՄՆ-ը, որն այլ ուսումնասիրությունների համաձայն բնակչության գրագիտության մակարդակով գրավում է 49-րդ տեղն աշխարհում, ուր, համաձայն նախագահ Զլինտոնի 1999-ի հաղորդման, դպրոցների շրջանավարտներից ոմանք չեն կարողանում կարդալ նույնիսկ դպրոցի իրենց ավարտական վկայականը, եւ նախագահն առաջարկում էր ընդունել ազգային կրթության զարգացման այնպիսի ծրագիր, որպեսզի արդեն *երրորդ* դասարանցիները գրաճանաչ լինեն, պարզվում է, որ այդ երկիրը եւ Հայաստանը նույն գրագիտության մակարդակն ունեն: Դրան կարող է հավատալ միայն չափազան միամիտ մարդը:

Կամ ինչո՞ւ է միեւնույն եղանակաբանությունը կիրառում ե՛լ ԱՄՆ-ի նման գերտերության, ե՛լ միջին չափի Գերմանիայի, ե՛լ փոքր Հայաստանի, ե՛լ քաղաք պետություն Սինգապուրի համար: Մի՞թե սա սիրողականության ապացույց չէ:

Կամ ինչո՞ւ են գործածվել 2 տարով հնացված տվյալներ, օրինակ՝ Հայաստանում բջջային հեռախոսների բաժանորդների թվի մասին: Իսկ ինչո՞ւ 2 եւ ոչ՝ 10, 20 տարով հնացած, կամ 1913 թվականի դրությամբ տվյալներ. ավելի «լավ» արդյունք կստացվեր: Սա ի՞նչ է. կրկին սիրողականություն, թե՞ միտումնավորություն:

Եւ վերջապէս, ո՞ր է առողջ բանականությունը: Ինչպե՞ս կարող է տեղեկութային բնագավառի զարգացվածության տեսակետից կազմված վարկացանկում ճապոնիան հայտնվել 16-րդ տեղում, զիջելով, օրինակ, Դանիային կամ Կանադային, Գերմանիան՝ 17-ում, Զնդկաստանը՝ 40-րդ, Չինաստանը՝ 50-րդ տեղում: Այս ո՞ր միամիտների համար են «նկարված» այդ վարկանիշները: Պարզ է, որ այս կարգի նյութերի միակ նպատակն է ԱՄՆ առաջին հորիզոնականի վրա բարձրացնելու ճանապարհով համոզել հավանական ներդրողներին նախըտրել ԱՄՆ այլ երկրներին, դրանով իսկ փրկելու համար հոգեվարքի մեջ գտնվող ամերիկյան տնտեսությունը, որին օդի պես անհրաժեշտ են ֆինանսական ներդրումները:

Բայց մե՞ր շահը որն է: Արդյո՞ք արժեր մեզ մոտ հրապարակել նման ոչ միայն հակագիտական, այլև մեր երկրի համար անբարենպաստ այդ «ուսումնասիրության» արդյունքները: Եթե ոմանք ուզում են բարձրացնել ԱՄՆ-ի վարկը, ապա ինչո՞ւ դա պիտի արվի մե՛ր հաշվին:

Ռուբեն Թարումյան
04.04.2006